

ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՑՆԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼԾԻՑ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ

18-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանը բաժանված էր երկու պետությունների միջև: Արևմտյան Հայաստանը Թուրքիայի, իսկ Արևելյանը՝ պարսկական գերիշխանության տակ էր: Իսկ այդ ժամանակահատվածում թե՛ Թուրքիան և թե՛ Պարսկաստանը քայքայման աստիճանի վրա էին կանգնած: Պարսկաստանի կառավարության թույլ դեկավարության հետևանքով տեղական ֆեոդալներն իրենց գերիշխանության տարածքում անսահման իրավունքներ էին վերապահում իրենց վրա և անգուսպ ճնշում ու կեղեքում էին հայերին: Նրանց պետական եկամուտը գոյանում էր ազգաբնակչությունից զանձվող հարկերից, ընդ որում հարկահանությունը կատարվում էր մի քանի փուլերով, որի հետևանքով փաշաների ու խաների պաշտոնյաները անխնա թալանում էին հայ ազգաբնակչությանը: Հարկ էին վերցնում անասունների, այգու, խոտի, արոտավայրի և տան համար: Հարկ էին զանձում նաև առևտրականներից, արհեստավորներից: Ժողովուրդը չքավոր էր ու թզկտված, ամեն ինչի կարոտ ու անճար: Նա իրավունք չուներ հակաճառելու, երբ մահմեդականը անարգում կամ անպատվում էր իր ընտանիքի անդամներին: Նա պարտավոր էր լուռ հնազանդվել իր ստորացուցիչ վիճակին:

Այս ծանր պայմանները, ֆիզիկապես բնաջնջվելու տագնապը հայերին ստիպում էին հեռանալ իրենց հայրենի երկրից, բռնել գաղթի ճանապարհը և փրկություն որոնել հեռավոր երկրներում: Հայերը գաղթում էին մեծ խմբերով և գաղթօջախներ էին ստեղծում Հրիմում, Ռուսաստանում, Հընդ-

կաստանում և այլուր:

Պարսկաստանի Ծախ Աքաւի օրոք մեծ խմբերով հայեր Ջուղայից բռնի տեղափոխվեցին Պարսկաստան, առևտուրն ու արհեստները այնտեղ զարգացնելու համար: Բայց Պարսկաստանում էլ նրանց հանգիստ չտվեցին: Ծախ Հուսեյնի օրոք արքունիքը այնպես հետադիմեց, որ պարսիկները ըսկընեցին հարստահարել ջուղայեցիներին: Ծախ Հուսեյնը հայերին առաջարկեց կրոնափոխ լինել: Հայերը հրաժարվեցին: Այնպիսի վիճակ ստեղծվեց, որ նրանք ստիպված եղան գաղթել դեպի Հնդկաստան: Հնդկաստանում հանգիստ հանգրվան գրտան և գաղթօջախներ հիմնեցին Բոմբեյում, Մադրասում, Կալկաթայում, Սուրաթում, Չիչրայում և այլն: Նրանք իրենց հատուկ ջանասիրությամբ բարեկեցիկ պայմաններ ստեղծեցին, հարստացան, բայց հոգով ու սրտով կապված էին հարազատ մայր երկրի հետ: Ամենայն ուշադրությամբ հետևում էին այնտեղ տեղի ունեցող քաղաքական անց ու դարձին: Երազում էին իրենց հայրենիքը տեսնել ազատագրված պարսկական բռնակալությունից:

Հնդկաստանի անվանի, մեծահարուստ և հեղինակություն վայելող Ծախամիր Ծախամիրյանը, որն առաջին հայ տպարանի հիմնադիրը դարձավ Մադրասում, առաջադիմություն, ազատագրություն և հայրենասիրություն էր հրահանգում իր տպարանում տպագրվող գրքերում, և հայ առաջին պարբերականի՝ «Ազդարար»-ի հրատարակիչ Հարություն քահանա Ծմավոնյանը Հայաստանի ազատագրության հույսը կապում էր Ռուսաստանի հետ: Ծախամիրյանն այդ ուղ-

դրությամբ բանակցություններ էր վարում ռուսական արքունիքին մոտ կանգնած նշանավոր հայ գործիչների՝ Ռուսաստանի թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արդուսյանի և Լազարյան տոհմի հիմնադիր Հովհաննես Լազարյանի հետ:

Ծախամիրյանից հետո Մադրասում տպագրության գործի շարունակողը դարձավ Հարություն քահանա Ծմավոնյանը: Նա ունեցավ իր սեփական տպարանը, որտեղ, բացի «Ազդարար»-ից, զբաղվում էր նաև գրքեր հրատարակելու օգտակար ու ազնիվ գործով: 1806 թվականին տպագրեց «Անցք կամ գործք» վերնագրով մի գրքույկ, որի մեջ ամփոփված են Մադրասի հայ համայնքի 43-րդ և 44-րդ ժողովների արձանագրությունները: Այդ ժողովներում իրենց ելույթներով հանդես են եկել Հայաստանը օտար լծից ազատագրելու գաղափարով տոգորված տեղացի պաշտոն հետքեր, որոնք, նկարագրելով Հայաստանի ծանր վիճակը, նրանից դուրս գալու միակ հույսը կապում էին ազատարար Ռուսաստանի հետ: Այդ հարցի շուրջ ժողովում արտահայտվեցին հայտնի հասարակական գործիչներ Հարություն ք. Ծմավոնյանը, Մանուկ Հակոբջյանը, Սեթ Սամյանը, Ավետ Սեթյանը, Վարդան Գասպարյանը և այլք: Արձանագրության տակ ստորագրեցին 33 անվանի մադրասաբնակներ¹:

1826 թ. հուլիս ամսին պարսից զորքը հանկարծակի հարձակում գործեց Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանամերձ բնակավայրերի, Ծիրակի, Ղարաբաղի, Ծամախիի ազգաբնակչության վրա: Պարսկական հրոսակախմբերը կոտորեցին, գերեցին մերձակա վայրերում բնակվող քրիստոնյա ազգաբնակչությանը²:


Այդ հարձակումը միանգամայն անսպասելի էր ռուսական բանակի հրամանատարության համար: Այսպիսով պատերազմ ծավալվեց Պարսկաստանի ու Ռուսաստանի միջև, որի նկարագրությունը տրված է հիշատակված գրքույկի մեջ: Պատերազմն ավարտվեց 1828 թ. մարտի 15-ին, Ռուսաստանի հաղթանակով, որի շնորհիվ Հայաստանը ազատագրվեց պարսկական տիրապետությունից:

¹ «Անցք կամ գործք» գրքույկի մասին Արամ Երևանցի «Էջմիածին» ամսագրի 1948 թ. № 10—12-ում տպագրել է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրներ» հոդվածը:

² Այս և հետագա անցուղարձի մասին մենք տեղեկացանք Կալկաթայում, 1829 թ. Մարդասիրական ճեմարանի տպարանում տպագրված «Ցուցակ վասն ամի Տեսուն» խորագիրը կրող գրքույկից, որից 1 օրինակ պահպանվում է Մատենադարանի Հայագիտական գրադարանում, 3864 համարի տակ:

րապետությունից և միացվեց Ռուսաստանին:

Վրաստանի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը ամենակտիվ մասնակցություն և օժանդակություն ցուցաբերեց ռուսաց բանակին այդ պատերազմի ընթացքում:



Պատերազմի ավարտից հետո ռուսաց կայսրը՝ Նիկողայոս Առաջինը, հատուկ հրովարտակ է ուղարկում Ներսես արքեպիսկոպոսին. «Մեք Նիկողայոս Առաջին կայսր և ինքնակալ Ամենայն Ռուսաց, և այլոց, և այլոց, և այլոց:

Սրբազան Ներսես արքեպիսկոպոս Հայոց՝

Ի վաղ ժամանակաց և ի դիպուածս բազմադիմիս ցուցեալ է Ձեր զհանդես ըղձակեպոյթեան Ձերոյ առ Ռուսաստան, և մանաւանդ յայժմեան պատերազմի ընդ պարսից, որոյ բարեշաջող կատարածն՝ որպէս յուսամս, պարտի լինել վաղվադակի:

Դուք անխոնջ վաստակակից եղեք Զորաց մերոց, մինչև անձնագրաւ լինել անհրաժեշտ վտանգի: Հրամանատար լատկացեալ Կովկասեան գնդի ղեկնրալ Ադիտանտ Պասկևիչն բազմիցս ծանոց ինձ զայսպիսի գովանի ճգանք Զերոյ... Դուք սիրալի հանդիսացաք գերօրինակ ջերմեռանդութեամբ յօգուտ Ռուսաստանի... Ի հրատարակութիւն այսքան օգտակար վաստակոց Զերոց և ի ցոյց լատուկ բարեհաճութեան Իմոյ առ ամենայն Ազգն Հայոց, իրաւացի դատեցայ դասակցել զՁեզ ի կարգ Ասպետութեան Սրբոյն Աղէքսանդրի Նեակոյ՝ զորոյ զընշանն առաքեալ ընդ ամին առ Ձեզ՝ մնամ առ Ձեզ բարեհաճ ՆԻԿՈՂԱՅՈՍ³:

1828 թ. ապրիլի 28-ին Ներսէս արքեպիսկոպոսը Էջմիածնից նամակ է ուղարկում Կալկաթայի հայութեանը:

«Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝ որ յայց ել մեզ և արար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ... Անտարանն ձեզ զմեծամեծացն Աստուծոյ ի հասեալ ժամանակի յայսմիկ վասն անձառ մարդասիրութեամբ փրկութեանցն նորա Հայրենեաց Հայաստանի Արարատեան աշխարհի՝ և բազմութեան Հայկազանց տառապելոց ընդ ամենայն սահմանս Ատրպատականի՝ հզօր զօրութեամբ և բարձր բազկաւ իւրոյ ինքնակալի Ամենայն Ռուսաց և մեծ տիեզերակալի թագաւոր կայսր Նիկոլայի առաջնոյ...»:

Աշտարակեցիին իր նամակում պատմում է պատերազմի ընթացքի և մանրամասնությունների մասին: Նամակը վերջացնում է հետևյալ տողերով.

«Եւ աղաչեմ զԱստուած, զի առաւել ևս յայսմ հետէ արժանի արասցէ զմեզ գրել ձեզ հետզհետէ զուրախականս և զփրելիս ձեր զանտարանութիւնս ազգական բարութեանց և յառաջադիմութեանց: Եւ ես կամ և մնամ միշտ իսկական վերապատուութեան և կատարելագոյն ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ յաւերժ բարեացապարտ ձեզ, ի սրտէ բարեացակամ՝ Զերում ամենաբարեպաշտ արժանաձնութեանց՝ խոնարհ ծառայ՝ արքեպիսկոպոս հայոց Վրաստանո—Ներսէս»⁴:

Մադրասի հայ հասարակությունը 1828 թ. նոյեմբերի 28-ին պատասխան նամակ է գրում Ներսէս Աշտարակեցուն.

«Օրինակ թղթոյ գրեցելոյ ի հասարակութենէն Հայոց Մադրասու առ Ամենապատիւ

բարձրապատիւ և գերապատիւ տէր Ներսէս վիճակաւոր արքեպիսկոպոսն Վրաստանո Հայոց:

Սուրբ ողջոյն համբոյր խոնարհական կարօտակէզն որդիական նուիրմամբ:

Անպատմելի ցնծութեամբ անձին, ամենագուրն հրճուանօք սրտի և խանդաղատական բերկրանօք հոգւոյ ընդգրկեալ համբուրեցաք զանտաւոր զանտաքեր զառ ի Սրբազնութենէդ զշնորհագիծն նամակ հայրախնամ օրհնութեանց և պատմագրական ծանօթատուութեանց ազատութեան Հայրենեաց մերոց՝ Աստուածընտիր մասինն Հայաստանեաց աշխարհի և հոգևոր մօրն մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, ի Աստուածապահ հզօր զօրաց Քրիստոսապաւսն Տիեզերակալի վեհափառ կայսերն՝ ամենայն Ռուսաց ի Նիկողայոսէ... Ապաքեն լսեաք միշտ ո՛ր վսեմական հայր մեր հոգևոր՝ զանցս պատերազմին Ռուսաց ընդ պարսից, և զբարեպէս աւարտ նորին, որով և զփրկութիւն հայրենեաց մերոց... քանզի ի հարկուրաւոր ամաց հետէ՝ ցանկալին հարց մերոց մեք աւաղիկ արժանացաք տեսանել, և ընթեռնուլ, վասն որոյ ո՛ր բան, ո՛ր բերան և ո՛ր լեզու բացատրել կարէ զմերս զայս ազգային խնդամտութիւն և գերախտագիտութիւն առ հայրդ մեր ամենագորով և աւետատու հեռաւոր և կարօտակէզ որդոցս: Երանի է աչաց ձերոց, երանի այնոցիկ, որք տեսանեն զգալի տեսանելեօք զանկարծախա զփրկութիւն մերոցս հայրենեաց... Մնամք բարձր սրբազնութեան ձերում Ամենախոնարհ ծառայք: Ի Մադրաս, ի 28 նոյեմբերի 1828»:

Վերջում՝ 40 ականավոր քաղաքացիների ցուցակ⁵:

Կալկաթայի համայնքը 1829 թ. փետրվարի 7-ին Պողոս Հորդանանյանի ընդարձակ և բարեկարգ բնակարանում հասարակական ժողով գումարեց. «Առ ի ընթեռնուլ զընդհանրական նամակ սրբազան Տեառն Ներսիսի եպիսկոպոսի և առաջնորդի Հայոց բնակելոց ի Վիրս, գրեալ առ Հայկազունս բնակեալս ի Կալկաթա...»:

Պարոն Պողոս Հորդանանյանը իր համոտ և պատշաճ ճառում ասաց.

«Եւ արդ քաղոյր է ինձ այսօր շնորհաւորել ձեզ համագգիք իմ՝ զցանկալի ազատութիւնն Արարատեան աշխարհին ի գերութենէ բռնաւորաց, զոր Սրբազան Ներսէս եպիսկոպոսն այսու աւետարանական և հայրենասիրական թղթով աւետարանէ հասարակութեան տեղոյս. և չունիմ երկբայութիւն զի ոչ գոյ աստ ի խմբի մերում հայկազն ոք՝ որ ոչ արտասուեցէ ի ցնծու-

³ Նույնը, էջ 34:

⁴ Նույնը, էջ 58—63:

⁵ Նույնը, էջ 58—63:

Աստուածատէր և Ազգատէր Հասարակութեանն Հայոց Փրկեալ Քաղաքին
Երևանայ. Արքակրօն Քահանայից, Բարեօնունդ. Իշխանաց և համայն բարե-
պաշտօն ժողովրդոց,

Որդեապարտ Սիրոյ հուէր :

Ազգրենէրդ հաղար լոյս որ մեր քաղցր Աշխարհքն Պարսից դառն չարչարան-
քիցն աշխուժեց, Քրիստոնի Տէրութեան ներքոյ ընկաւ : Փառք բարերարին
Աստուծոյ, որ այրուհեան աւել ներգութիւն չէք ունենալէց, ազատ քաղաքի քա-
ղաքացի պիտիք անուանիք, ձեր Ազգատիրութեան խնամատիրութեան լուրն, և
Աստուծոյ յառաջող խնութիւնն բարձր Աշխարհ պիտիք տարածիք :

Իմ լու Քաղաքացիք, էտպէս երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կար-
ծեմ որ մեր հայրենիքն ևս Արշակունի թագաւորութեան ժամանակունն էլ չէին
պատահել, զերան թէպէտե թագաւորուն իրենանցն էր, սակայն բարբարոսութիւն
և դաւաճան պակաս չէր : Որքան աղաչեմ, նախ աղօթս անելք որ ԱՅ Ամենազոր-
մամբ ԿԱՅՍԵՐԻՒԿԱՆԱԲԱՍԻ Աթոռն միշտ հաստատ պահի, տարն
կարուի, և ամեն թշնամեաց վերայ յալմանդ : Ապա աղաչեցէք, որ նոյն ԱՅն մեր
Ազգին սէլ մարտն ունայ, երկար կեանք և բարի յաջողութիւն, որ կարենան
ճանաչել թէ ինչ է լաւն և հեռեւից նմին :

Պարտ է ուրեմն այդպիսին ոտնատաք չտալ, նորա ձեզ տուած աղաատիւն
անմահ հիմունի համարել. ջանալ որ ձեր խանդաւոյ որդիքն կարողանան իմաս-
տաք թուր բռնել իշխանացն և բարերար կոյսեր ձերոյ. և ձեր աղջ-
կերքն գրիչ, նորա քաջութիւնն, և սքա նորանց քաջութիւն գրեն. նորա դառ-
նան քաջ զորք և դորսկանք. և սքա քաջ իմաստուն և լու համարիկաւք. և թէ
կարենայ մեր աշխարհն մին անգամ իւր որդիք և դստերքն էտպէս կատարելաբ
ծաղկած տեսանել, չգիտեմ, որ մին Երանկի ճիցն պակաս լինայ, թէ լուսա-
ւորութեամբ, թէ արուեստով, թէ ազնուութեամբ, և թէ երջանկութեամբ. և ոչ
թէ միմիցն : Ահա էտպի իմ ցանկութիւնս իմ քաղցր Աշխարհիս համար, և թէ որ
հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մէկ
հիմն կղենէք և ԱՅ կշիւն. և ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար և մանկ ձեզ
համար : Ապա թէ ոչ էլ ուրիշ չեմ ու չափ պատճառ չունիք, և եթէ զանց կառ-
նէք գլխից ըսող անելու համար, առաջի ահեղ Առնին Քնի պարտախանն
դուք էք, և դուք պիտիք լինէք. Ողջ երաւք : մնամ

Ազնուութեան Ձերոյ,

Ին Կոնստանդնուպոլիս 1. 1828.

Ինչիցէ Երանկապետ շէնքաբանս :

Իմաստ. Տ. Ծառայ

Մարտի 1-ին Քաղաքի Քաղաքացիական խորհուրդի 1828 թ.

թե՛նէ՛ արտին ընդ երկնային երանութիւնսն զոր ազգն մեր ակնունի վաշելել յետ իբրե հինգ հարիւրամեայ թշուառութեան ի սահման գերութեան...»:

Ներսէս Աշտարակեցու մամակի ընթերցումից հետո Մեսրոպ Դավթյան Թաղիադյանը «ասաց զնաո մի գեղեցիկ ի վերայ ազատութեան Հայոց աշխարհին» (էջ 76—85):

Թաղիադյանի մտից հետո ժողովը խնդրեց պ. Հովհաննէս Ավդալյանին, ընթերցել Ներսէս Աշտարակեցու գրած մամակը:

Վերջում բերված է ժողովի մասնակից կալկաթաբնակ արժանավոր 104 հայ անձնավորությունների ցուցակը⁶:

Նշանավոր գրող ու հայտնի հասարակական գրողի Մեսրոպ Դավթյան Թաղիադյանը ծնվել է Երևանում 1803 թվականին, սկզբնական կրթությունը ստացել է Էջմիածնի վանական դպրոցում: 1823 թվականին մեկնել է Հնդկաստան և աշխատանքի անցել Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում որպէս ուսուցիչ և միաժամանակ սովորել անգլիական եպիսկոպոսական ճեմարանում, որտեղ ստացել է բարձրագույն կրթություն:

Նա շրջագաւել էր Հայաստանի շրջաններում և մոտիկից ծանոթացել պարսկական լծի տակ տառապող հայ ժողովրդի ծանր ու ճնշված կյանքի հետ: Հնդկաստանում իր գործունեության առաջին տարիներ-

ից երազում էր իր սիրելի հայրենիքը, հարազատ Երևանը տեսնել ազատագրված օտար բռնակալությունից:

Մեծ հայրենասեր, ազատատենչ, հայ ժողովրդի առաջադիմության ջատագով Մեսրոպ Թաղիադյանը, լսելով Արևելյան Հայաստանի ազատագրության և Ռուսաստանին միանալու լուրը, ուրախանում է, ցնծում անսահման և մի գեղեցիկ ողջույնի մամակ գրում Հայաստանի և հատկապէս Երևանի ազգաբնակչությանը:

Թաղիադյանը 1828 թ. նոյեմբերի 1-ին իր գրած մամակը տպագրել է Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանի հայկական բաժնում, որը ղեկավարում էր ինքը: Նամակի բնագիրը պահպանվում է Մատենադարանի Արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի № 61 թղթապանակում, վավերագիր № 788: Տպագրված մամակի տակ իր ձեռագրով ստորագրված է՝ «Մեսրոպ Դավթեան Թաղիադեանց»*:

* Նամակը 1880 թվականին տպագրվել է «Փորձ» ամսագրում, որպէս Պ. Պողոյանի «Ծանկն» անունով վկայի ծանոթություն: Պ. Պողոյանը գրում է. «Տպելով այստեղ հանգուցյալ Թաղիադյանի մամակը, մեծ պարտականություն կատարած ենք համարում...»:

Նամակը Պողոյանին անձամբ բերել է տվել Արգար Գյուլումյանը: Պետք է ենթադրել, որ Պողոյանն էլ հանձնել է Էջմիածնի կաթողիկոսական դիվանին:

⁶ Նույնը, էջ 75—98:

